

ՎԻԳԻՆ Յ. ՂԱԶԱՐԵԱՆ, «ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ», ՀՍՍՀ ԳԻՏՈՒՔԻՆՑՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՆԵՐԻՆ, ԵՐԵՎԱՆ, 1980 (148 էջ, արտատպումներ՝ 72 սև, 7 գունաւոր) :

ԺԴ. դարու կիլիկեան՝ ինչպէս եւ առհասարակ հայ մանրանկարչութեան կարեւորագոյն ներկայացուցիչներէն՝ Սարգիս Պիծակի արուեստին բնութագրումին նուիրուած է այս աշխատասիրութիւնը, որ բացայայտօրէն կը պատկանի մանրանկարչութեան պատմութեան բնագաւառին, շնորհիւ՝ հեղինակին պատրաստութեան, օգտագործած արուեստագիտական չափանիշներուն, եւ անշուշտ՝ արծարծած խնդիրներուն :

Յատաշարանին մէջ Վ. Ղազարեան կ'անդրադառնայ Պիծակի արուեստին շուրջ ցարդ կատարուած ուսումնասիրութիւններուն եւ արժեւորումներուն, եւ մանրանկարչական արուեստին իւրայատկութիւններուն (նիւթին հետ յարաբերութիւնը, տիպարներուն ներկայացման կերպերը, դարդանկարչական հարցերը, եւլն.) :

Յաջորդ ութը գլուխներուն մէջ՝ (էջ 26-124) «Սորաններ», «Աւետարանիչներ», «Անուանաթերթեր», «Տէրունական Նկարներ», «Տեքստային Լուսանցանկարներ», «Աստուածաշունչ» (Մատ. 26-27), «Բժշկութեան Աւետարան», եւ «Հետեւողութիւններ», Վ. Ղազարեան մանրամասնութեամբ, խղճմտօրէն եւ ակներբե զորոյով՝ հանդէպ նկարիչին եւ անոր արուեստին, կ'ուսումնասիրէ յիշեալ մարզերուն մէջ Պիծակի աշխատանքը :

Մասնաւորաբար մանրանկարչական արուեստին մէջ կարեւոր տեղ կը զբաւէ ձեւարանական խնդիրներուն ճշգրիտ գնահատումը. ձեւական մասնայատկութիւնները կու գան առաջին կարգի վրայ, ոչ միայն ուրոյն զեղպիտական արժէքին պատճառով, այլ նաեւ իրենց խորհրդանշական առընչուածութեան՝ ներկայացուած նիւթին հետ : Մանրանկարչութեան պատմութեան մասնադէտներուն մեծամասնութիւնը, նիւթին նկատմամբ իրենց ունեցած բացարձակ նուիրումին

հետեւանքով թերեւս, յաւելեալ եւ երբեմն աւելորդ հոգածութիւն ցուցարեբա՞ծ են ձեւաբանական-պատմադիտական մանրամասնութեանց, յաճախ ամբողջ դրուիներ կամ գործեր յատկացնելով երկրորդական խնդիրներու ճշգրտմին համար:

Յամենայն դէպս մանրանկարչութեան մասնագէտներուն մօտեցումի այս կերպը ժխտական անդրադարձ չէր կրնար ունեցած ըլլալ արուեստի պատմութեան վրայ: Թէեւ գործերուն արուեստաբանական արժեւորումը պատմաբաններուն պատասխանատուութեանց ծիրէն ներս չի մտնէր, սակայն, պէտք չէ որ նաեւ անտեսուի այն իրողութիւնը, թէ միշտ, եւ մասնաւորաբար արուեստներու պատմութեան մէջ, գոյութիւն չունի այսպէս կոչուած զուտ մասնագիտական-առարկայական կեցուածք: Հետեւաբար՝ անհրաժեշտ է զարգացնել արուեստի բնոյթին շուրջ յստակ, բազմակողմանի եւ յառաջադէմ տեսակէտներ, որպէսզի նոյնիսկ անկեղծ դնահատումները չվերածուին ենթակայական ու մակերեսային արտայայտութիւններու:

Հոս կը կայանայ Վ. Ղաղարեանի գործին մասնաւոր արժէքը: Գրեթէ առաջին անգամ ըլլալով՝ հայկական մանրանկարչութեան նուիրուած հայ մասնագիտական գրականութեան մէջ, ձեւաբանական հարցերը կը դրուին մարդկայնական-դեղագիտական հասկացողութիւններու աւելի լայն շրջանակի մը մէջ: Մանրանկարիչները չեն ստեղծագործած պարզապէս եւ միա՛յն գեղեցիկ գործեր արտադրելու համար. մազադաթի մը եւ սակաւաթիւ գոյներու նեղ կարելիութեանց սահմաններուն մէջ, անոնք փորձած են վերակառուցել հոգեկան-իմացական-աստուածային իմաստներ, ըստ ժամանակին յատուկ, եւ անշուշտ՝ սեփական աշխարհահայեացքին: Այսպիսի տուեալներով հարուստ արուեստի մը ուսումնասիրութիւնը մասնադէտէն կը պահանջէ ընդարձակ տեսողաչափ մը, այլապէս՝ կը խեղաթիւրուի առարկան:

Իր նախորդներէն տարբեր՝ Վ. Ղաղարեան կը յաջողի ընթերցողին մօտ ստեղծել գործօն հետաքրքրութիւն մը ո՛չ միայն Պիժակի գործին նկատմամբ, այլեւ այնպիսի հարցերու, որոնք մանրանկարչութեանէն շատ անդին կ'անցնին: Իսկ եթէ հեղինակը ուղղակիօրէն պարտադրուած չի զգար սպառիչ լուծումներ առաջադրելու, անիկա առնուազն կամուրջներ կը հաստատէ մանրանկարչութեան եւ միւս բնագաւառներուն միջեւ, որովհետեւ, ի վերջոյ, մշակոյթի պատմութիւնը այնպիսի միութիւն մըն է, որուն իւրաքանչիւր մասնիկը էարանօրէն կախում ունի մնացեալներէն, ենթակայ է եւ բացատրելի՝ միայն ընդհանուրին զարգացումի ներքին տրամաբանութեան օրէնքներով:

ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ